



შეფასებისა და გამომცდების
ეროვნული ცენტრი

Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:


Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :



1-19 առաջադրանքների հրահանգ – պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում դրեք X նշանը:

1 . Ճարտարապետական ո՞ր տեսակին է պատկանում նկարի վրա ներկայացված ճարտարապետական տաճարի հատակագիծը:



- ա. Եռակոնք
- ծ. Քառակոնք
- գ. Բազիլիկ
- զ. Բազմաբսիդ

2. Խորհրդանշականորեն ի՞նչ են մարմնավորում Միքելանջելոյի ստեղծած ստրուկների քանդակները:




ա. Պայքար ազատության համար

ծ. Ստրուկների կեցության ծանրությունը

գ. Մարդկանց հոգեբանական տիպերը

դ. Առաքելական եկեղեցու ազդեցության տակ գտնվող տարբեր ոլորտները

3. Ո՞րն է վրացական քրիստոնեական ճարտարապետության մեջ ներգծված իսաչի տիպի ճարտարապետության նմուշը:



- ա. Ծրոմին
- ծ. Աթենի Սիոնը
- գ. Ալավերդին
- դ. Բոլնիսի Սիոնը

4.Վրացական միջնադարի ո՞ր քրիստոնեական տաճարի որմնանկարային զեղանկարչությունն է պատկանում պալեոլոգոսների ոճին:



- ա. Ուրխսան
- ბ. Ղինձվիսին
- գ. Տիմոթեոսուբանին
- դ. Աթենի Սիոնը

5. Ո՞ր գեղարվեստական հոսանքի նմուշն է ներկայացված լուսանկարի վրա:



ա. Ֆուտուրիզմ

բ. Պոստիմպրեսիոնիզմ

գ. Աբստրակցիոնիզմ

դ. Սյուրռեալիզմ

6. Ո՞ր գեղարվեստական միջոցի միջոցով է ստեղծում վրաց վարպետը էքսպրեսիայի զգացողություն Օպիզայի տաճարի Աշոտ Կյուրոպաղատի պատկերով ռելիեֆի վրա (IX դար):




- ա. Միմետրիկ կոմպոզիցիոն կառուցվածք
- ծ. Կոմպոզիցիայի ճակատային բնույթ
- գ. Ձևերի չափազանցություն
- դ. Բարձր և ցածր ռելիեֆի հակադրությամբ ստեղծված դինամիզմի զգացողություն

7. Ո՞ր տաճարի դեկորատիվ ձևավորման համակարգում է ներգրավված լուսանկարի վրա ներկայացված Քրիստոսի համբարձման կոմպոզիցիան:



- ա. Գելարի
- ծ. Նիկործմինդա
- ճ. Սամթավրո
- ջ. Սամթավիսի

8. Որոշեք ո՞ր հայտնի կառույցն է ներկայացված լուսանկարի վրա:



ա. Հռոմի Պանթեոնը

ծ. Այա Սոփիայի տաճարը

զ. Սանտա Մարիա դել ֆիորե տաճարը

զ. Սուրբ Պետրոսի տաճարը

9. Ըստ տրված հատվածի անվանեք քանդակագործական կոմպոզիցիան:



ա. Լորենցո Բերնինիի «Սուրբ Թերեզայի զմայլանքը»

ծ. Անտոնիո Կանովայի «Ամուրը և Փսիքեն»

գ. Միքելանջելոյի «Պիետան»

դ. Բենվենուտո Չելինիի «Ֆոնտեբլոյի նիւփան»

10. Ո՞ր դարաշրջանի և/կամ գեղարվեստական հոսանքի նմուշն է ներկայացված նկարի վրա:



ա. Գոթիկա

ծ. Նեոկլասիցիզմ

գ. Իմպրեսիոնիզմ

դ. Վերածնունդ

11. Ո՞վ է լուսանկարի վրա ներկայացված «Աբստրակտ կոմպոզիցիա» գեղանկարչական նկարի հեղինակը:



ա. Ջեկսոն Պոլոկը

ბ. Վասիլի Կանդինսկին

գ. Դավիթ Կակաբաձեն

դ. Խուան Միրոն

12. Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը բնորոշ չէ ներկայացված արվեստի նմուշին:



ա. Դեկորատիվ ձևավորման սիմետրիկ, հավասարակշռված բնույթ

ծ. Թանկարժեք քարերի, ոլորուն և «ցվարա» տեխնիկայի ներդաշնակ սինթեզ

գ. Գավաթի գունային լուծման զուսպ, հասարակ բնույթ

դ. Քանդակադրոշմի (չեկանկա) զարդանախշի բազմազանություն

13. Ո՞ր գեղարվեստական հոսանքին է պատկանում ներկայացված արվեստի նմուշը:



- ա. Ֆուտուրիզմին
- ծ. Աբստրակտ էքսպրեսիոնիզմին
- զ. Իմպրեսիոնիզմին
- զ. Փոփ արտին

14. Ո՞ր ճարտարապետն է նկարի վրա պատկերված կառույցի հեղինակը:



ա. Ֆրենկ Լլոյդ Ռայթը

ծ. Անտոնիո Գաուդին

ց. Գուստավ Էյֆելը

դ. Լե Կորբուզյեն

15. Թվարկաձևերից ի՞նչը բնորոշ չէ Կլոդ Մոնեի գեղանկարչությանը:

- ա. Գույնի վրա լույսի մթնոլորտային էֆեկտների արտացոլումը
- բ. Նկարելու ընթացքում արհեստական լուսավորության կիրառումը
- գ. Բաց երկնքի տակ նկարելը
- դ. Նատուրայից նկարելը

16. Ըստ ներկայացված արվեստի նմուշի դետալի անվանեք ստեղծագործության հեղինակին:



ա. Ջորջոնե

ծ. Լեոնարդո դա Վինչի

գ. Յան Վան Էյկ

դ. Տիցիան

17. Ո՞ր բացատրությունն է արտահայտում գծի յուրահատկությունը ներկայացված արվեստի նմուշների վրա:



ա. Առաջին նկարի վրա գիծը գործածվում է պատկերի ձև, իսկ երկրորդ նկարի վրա՝ մակերեսի փափուկ ֆակտուրա ստեղծելու համար:

ծ. Առաջին նկարի վրա գիծը ծառայում է թեթև հակադրության էֆեկտի ստեղծմանը, այն դեպքում երբ երկրորդ նկարի վրա գիծը գործածված է տարածքի պատրանք ստեղծելու համար:

ց. Առաջին նկարի վրա գիծը ծառայում է համաչափության և հավասարակշռության պահպանմանը, իսկ երկրորդ նկարի վրա ստեղծում է ստվերի էֆեկտ:

ճ. Առաջին նկարի վրա գիծը բացասական տարածքն եզրապատող, իսկ երկրորդ նկարի վրա՝ պատրանքային տարածքում անհետացման եզրին գտնվող կետի ստեղծման միջոց է:

18. Ո՞ր գեղարվեստաոճական յուրահատկություններով է բնութագրվում նկարի վրա պատկերված վրաց միջնադարյան փորագրական արվեստի նմուշը:



ա. Բարձր ռելիեֆով կատարած համաչափ կոմպոզիցիան առանձնանում է ծավալային, թեև անհամամասնական, էքսպրեսիվ պատկերներով, ինչպես նաև թիկնոցների և թևերի ծալքերն արտացոլող նկարով ստեղծած դեկորատիվ ռիթմով

ծ. Բարձր ռելիեֆով կատարած պլաստիկ պատկերների և կատարելագործված զարդանախշային մոտիվների սինթեզով վարպետը ստեղծում է վրացական քանդակադրոշմի հիանալի նմուշ

զ. Գծային, դեկորատիվ բնույթի ցածր ռելիեֆով կատարված պատկերներ չափազանցված ձևերով և առանձնանում են ձևերի չափազանցման միջոցով ստեղծած էքսպրեսիվությամբ

զ. Բարձր ռելիեֆով կատարած գոտկատեղից վերև երկարացված պատկերներին ձևերի չափազանցումը ավելի անբնականություն է հաղորդում, քան էքսպրեսիա:

19. Որոշեք, որո՞նք են դիմանկար ստեղծելու համար Ռեմբրանտ Վան Ռեյնի կիրառած հիմնական գեղարվեստական միջոցները:



- ա. Ռիթմ և շարժում
- ծ. Գույն և լուսավորում
- գ. Հեռանկար և հաշվեկշիռ
- դ. Համաչափություն և ամբողջականություն

20-25 առաջադրանք: «Ճշմարիտ է - Միսալ է»

Առաջադրանքի հրահանգ– ուշադիր ծանոթացեք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշեք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրեք ճիշտ ձևակերպումը:

Դիտողություն. Եթե կարծում եք, որ ձևակերպումը սխալ է և գտնում եք, որ վկայության մեջ տրված պարզաբանումը ինքնին ճիշտ է ձևավորված, թեև չի ներկայացնում տրված տերմինի և/կամ բառի բացատրությունը, ապա անփոփոխ թողեք պարզաբանումը և այդ նույն պարզաբանման համար փնտրեք և համապատասխանեցրեք համարժեք տերմին և/կամ բառ:

Նմուշ

დავადლება № ჭ □ მ ☒
ფაქტუალური მტკიცება, ხარკი მონოქრომული ფე-
ხტი მონოსტრუქტურული ფიქციის.

20. Ջոտոն խախտեց բյուզանդական պատկերագրության համար բնորոշ ավանդույթներն և դարձավ Իտալական Վերածննդի հիմնադիր:

21. Ֆոփիզմը ժխտում էր հեռանկարի ավանդական ձևով կիրառումը՝ մեկ հաստատագրած դիտման կետից տարածքի արտացոլում և ենթադրում էր նկարի մակերևույթի վրա երկրաչափական ձևերով մասնատված պատկերի ազատ դասավորություն:

22. Գեղարվեստական միջոց իմպաստոն օգտագործվում է գեղանկարչության մեջ և նկարագրում առավելապես ոչ վառ երանգների աննկատելիորեն անցումը իրար մեջ, մոտավորապես ծխի և օդի միախառնման պես:

23. Խորհրդապաշտները հրաժարվում էին ռեալիզմի և իմպրեսիոնիզմի նատուրալիստական իդեալներից և նախընտրում էին վերարտադրել բանաստեղծական, սուբյեկտիվ աշխարհ, ընկալված առեղծվածային գաղափարների ազդեցության տակ:

24. Արվեստի տարբեր բնագավառների միավորման հիման վրա ստեղծվում են արվեստի սինթետիկ բնագավառներ:

25. Խաչի ձև ունեցող հատակագծով կառույցը, որի բոլոր չորս կողմերը վերջանում են արսիդներով կոչվում է եռակոնք:

Առաջադրանք 26: *Գործնական աշխատանք*

Հրահանգ – գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա պատկերեք տարբեր տոնայնության ուղղանկյուն երկրաչափական պատկերներից ստեղծված աբստրակտ կոմպոզիցիա: Ստվերների միջոցով պատկերին հաղորդեք ռելիեֆի պատրանք/տեսք: Պատկերը կոմպոզիցիոն սկզբունքների համապատասխան տեղավորեք նկարի հարթության վրա:

Առաջադրանքներ 27-31: Ժամանակագրության սահմանում:


Առաջադրանքի հրահանգ – դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) գեղարվեստական հոսանքները, նկարիչներին, ճարտարապետական և կերպարվեստի նմուշները ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Նկատի ունեցեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

27. Դասավորեք դիմաքանդակները ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3.



4.



28. Դասավորեք ներկայացված ճարտարապետական նմուշները ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3.



4.



29. Դասավորեք գեղարվեստական հոսանքները ժամանակագրական հաջորդականությամբ:

1. Ռոմանտիզմ


2. Ռոկոկո

3. Ռեալիզմ


4. Բարոկկո

30. Դասավորեք ներկայացված կանանց դիմանկարները, ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3.



4.



31. Դասավորեք վրաց նկարիչների ստեղծած «Ընձենավորի» պատկերագարությունները «ՋճԱ մտորալու լույսի քննարկ» («Նստել էր նա ջրի ափին արցունքալ») ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3.




4.



Առաջադրանք 32: Համապատասխանության որոշում

Առաջադրանքի հրանահգ՝ A սյունակում տրված կերպարվեստի տեխնիկաներին համապատասխանեցրեք B սյունակում տրված արվեստի նմուշները: Նկատի ունեցեք, որ մեկ տեսակին համապատասխանում է միայն մեկ նմուշ:

A	1. Կոլլաժ	2. Վիտրաժ (ապակենկար)	3. Մանրանկարչություն		
B	Տ.	Ծ.	Թ.	Չ.	
					

Առաջադրանք 33

Առաջադրանքի հրահանգ – A սյունակում տրված գեղարվեստական հոսանքներին համապատասխանեցրեք B սյունակում տրված գեղանկարչության նմուշները: Նկատառեք, որ մեկ հոսանքին համապատասխանում է միայն մեկ նմուշ:


A

1. Իմպրեսիոնիզմ
2. Պոստիմպրեսիոնիզմ
3. Էքսպրեսիոնիզմ

B Տ.



Ծ.



Ծ.



Յ.



Չ.



34: Արվեստի որոշ նմուշներ մտածված են, որպես կրոնական սյուժեի մեկնաբանություն (ինտերպրետացիա): Տրված նկարներից ընտրեք արվեստի մեկ նմուշ և կապակցեք այն կոնկրետ սյուժեի հետ: Վերլուծեք ստեղծագործությունը և որոշեք.


1.



2.



3.



4.



ճ. Արտահայտչական և կոնտեքստուալ առանձնահատկությունները, որոնք բացահայտում են այս ստեղծագործության կապը ձեր կողմից նշված սյուժեի հետ:

բ. Ո՞ր գեղարվեստական միջոցների միջոցով է հեղինակն արտահայտում ստեղծագործության գաղափարը:

35. 35: Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն

Իմաստավորեք, վերլուծեք և գնահատեք ստորև տրված արվեստի նմուշը



Առաջադրանքը կատարեք ըստ նշումների.

35.1 Նկարագրեք և բնութագրեք կոմպոզիցիան. Ո՞ր ժանրին է պատկանում տրված կոմպոզիցիան: Նյութի և տեխնիկայի հիման վրա որոշեք կերպարվեստի ո՞ր ճյուղի նմուշն է ներկայացված:

35.2 Վերլուծեք և հակիրճ ձևակերպեք ի՞նչ արտահայտչական միջոցներ և մեթոդներ է կիրառում հեղինակը նկարի վրա գեղարվեստական կերպար և բնույթ ստեղծելու համար:



35.3 Գեղարվեստա-ոճական բնութագրիչների հիման վրա սահմանեք աշխատանքի ստեղծման ժամանակը, որոշեք ո՞ր երկրի արվեստի նմուշն է ներկայացված, անվանեք հեղինակին:

35.4 Գնահատեք աշխատանքը - արտահայտեք սեփական վերաբերմունքը, դատողություններ արեք և հիմնավորեք Ձեր կարծիքը:

35.5 Դատողություններ արեք ազդեցությունների շուրջ, քննարկեք ստեղծագործությունը պատմա-մշակութային և այլ համատեքստում: